

Իսկ տան մէջ ոչ թէ տաճարը կամ ճաշարանը, այլ գաւիթն էր սահմանուած այս ճաշին, ուր սովորականներէն աւելի բազմութիւն կը հաւաքուէր, եւ գաւիթը ճաշարանէն աւելի ընդարձակ՝ յարմարագոյն էր այդ նպատակին, ուր կարելի էր ի հարկին դնէն դուրս՝ տան առջեւ ալ ամփոփել ճաշողաց մէկ մասը: Այս պարագայն մեզ կ'աւանդէ Մանդակունին՝ ըսելով. «Ոչ է քեզ պարտ... զՔրիստոս (այս ինքն աղքատները) թողուլ արտաքոյ գաւրին» եւ ճոխերն «ի ներքս» (61): Եւ թէ «գաւիթ» բառով կ'իմանայ իսկապէս բակը, յայտնի է իւր միւս մէկ տեղէն, թէ մուրացիկն «երկիւղիւ ի դրունս, երկիւղիւ ի գաւիթս, երկիւղիւ ի տունսն մը տանէ» (52). եւ ուր զգալի է գաւթին տեղն իսկ, իսկոյն դոնէն ներս:

Բայց կ'երեւի թէ առտնին ճաշակումն երկար չտեւեց, եւ մատաղի միւս տեսակաց պէս փախադրուեցաւ սրբավայրերը: Այնպէս որ Ներսէս Շինողի կանոնաց մէջ, այն է է դարուն, կը տեսնենք արդէն՝ որ հաւատացեալք մատաղի համար վանքերը կը հրաւիրուին (Շին. ԺԲ): Եւ ես այնուհետեւ առտնին հաւաքմանց յիշատակութիւն չեմ գտած. ընդ հակառակն՝ Տաթեւացոյն ըսածին պէս՝ մատաղ ու նուէր